

բոյական, արուեստից և տնտեսութեան վերաբերեալ գրուածներ, զոր մեծ ախորժով և եռանդեամբ կ'ընթեռնուն, քան ուրիշ տեսակ գրուածներ: — Երկրագործութիւնն միշտ խնամով'ի գործ դրուած էր 'ի ձաբոն, ուստի շատ մեծ յառաջադիմութիւն չէր կրնար ընել, բայց եթէ նոր դիւրացուցիշ գործեզր, և օտար տունկեր ընդունելով'ի մշակութիւն: Ձաբոնի կլիմայն ալ ընդհանրապէս մեղմ և բարեխառն է, երկրին ուոգումն ճարտարութեամբ յաջողած. գլխաւոր մշակուած բերքն է բրինձ, ոչ պակաս և թէյ, շերամ՝ որոյ որդանց ձուերը կը խաւրեն յեւրոպա և յայլ կողմանս, և ընդեղէններ: Նշանաւոր են թուղթ շինելու թթենիք, մոմաբեր ծառն, քափուրադափնին, խիժաբեր ծառն, և այլն. և պէսպէս ծաղկունիք, որով բուրաստանաց կամ պարտիզաց դարմանն և արուեստն ալ նշանաւոր եղած է 'ի ձաբոն:

Երկրին հարըստութեան և արուեստից մեծ աղբիւր մ'ալ են տեսակ տեսակ մետաղներն, հանքածուխն, վանակն, 'ի ծովեղերս ալ բուստ և մարդարիտ: Շատ ճարտար են ձաբոնացիք ոսկիէ և պղընձէ գործուածներու, և դանակեղէն շինելու. զարմանալի յաջողութիւն մ'ալ ունին սովորելու և նմանելու օտարաց արուեստին, որով քիչ ատենէն թերևս կարօտ չըլլան յեւրոպացւոց առնուլ կահ կարասի: Իրենց ձեռագործաց մէջ անուանի են կնքախէժն (laque), յախճապակն, մետաքսեայ բարակաման շարք, որոց նման դեռ ուրիշ տեղ չերեցաւ, և թուի թէ գաղտնիք մ'ունին յայսմ ձաբոնիք: Բայց ուրիշ օգտակար և պիտանի ձեռագործաց ալ դեռ կարօտութիւն ունին օտարներէ առնուլ:

Բայց ձաբոնաց ամենէն յառաջադիմութիւնն այս է՝ որ ժողովուրդն ալ սկսաւ հասկընալ իր գլխաւորաց կամ վարչութեան ջանից և գործոց օգուտը, և սկսաւ թողուլ օտար ազգաց հետ ունեցած կանխակալ ատելութիւնը. որով սոքա հիմայ կը ընան անվախ բնակիլ թէ 'ի մայրաքաղաքն Ետոյ և թէ

ուրիշ վաճառաշահ քաղաքներ. ուամիկն կը բռնէ զլեզուն՝ նախատական խօսք կամ անուն տալու, և ոչ միայն կ'ընտելանայ օտար կերպարանաց և տարագուց, այլ և իրեն ազնուականաց շատն ալ կը տեսնէ եւրոպական զգեստով և ձեռվ: Անշուշտ այնչափ աւելի պիտի զարգանայ տէրութիւնն՝ որչափ որ յաջողի ընտելացընել զժողովուրդը օտարազգեաց պիտանի սովորութեանց և հնարից, և ջնջել այն անպատճառ և բարիարգել խորշումն և ատելութիւնը, որով ձաբոնաց դրացի և անհամեմատ մեծ ազգն և տէրութիւնն Զինաց՝ անհամեմատ կերպով ալ յետամնացը են:

Պ. ՇԼԻՄԱՆԻ ԳԻՒՏԸԼ

Աւկուսդայի լրագիրը հրատարակեց վերջերս Պ. Հենրիկոս Շլիմանի մէկնամակը, այն անձին որ իլիոն քաղրին ստոյգ տեղը գտնելու համար ըրած անխոնջ հետազօտութեամբքն ծանօթ է ամեն գիտնականաց:

Այս նամակն զոր գրեց Պ. Շլիման 'ի Տրոյիոյ տարւոյս յուլիսի 17են, կը պարունակէ շատ մը անակնկալ ու հետաքրքրական տեղեկութիւններ, զորոց զզլիմաւորս համառօտիւ նշանակենք:

« Ամսոյս սկիզբը, կը գրէ Պ. Շլիման, տրոյական մեծ պարսպին տակ և մօտ այն շէնքին զոր արդէն տուն Պրիամու համարէաք, ութեակէս մեղր խորութեամբ մեծ ու նշանաւոր ձեռվ պղընձաձոյլ աման մը գտայ, և տեսնելով անոր մօտ եղած ոսկիներն՝ հետաքրքրութիւնս շարժեցաւ իմանալու այն ամանին ինչ ըլլալը: Ամանին վրայ մէկ ու կէս մեղր թանձրութեամբ կարմրագոյն մոխրէ կեղև մը պատած էր, իբր զքար պնդացեալ. և ունէր չորս կողմը ամրութեան համար 1. 80 մեղր լայնութեամբ և 6 մեղր բարձրութեամբ զօրաւոր պատ մը. և ինձ հաւանական թուեցաւ որ դրուած ըլլայ

Հոն այն ամանն յառաջ քան զսկիզբն կործանման Տրոյիոյ :

Ուստի ուղելով այս անհամեմատ գիւտն ծածուկ պահել գործաւորացս ընչաքաղց անյագութենէն, հնարք մը մտածեցի և 'ի գործ դրի, այսինքն հանդիստ տուի իրենց, թէպէտ և նախաճաշոյ ու հանգստեան ժամն դեռ հնչած չէր. և երբ իրենք ուտելու և հանգչելու զբաղած էին, սկսայ մեծաւ աժխուժութեամբ անձամբ ջանալ և աշխատիլ, որպէս զի 'ի լոյս հանեմ այն ամանին մէջ թաղեալ մեծագին առարկաները. Աշխատելու ատեն թէպէտ միշտ վտանգի մէջ էի, ինչու որ վայրկեան առ վայրկեան կը սպառնար վրաս կործանելու այն քարաշէն ու հողազանգուած հնացեալ պատը՝ որուն տակ կ'աշխատէի, բայց նոյն վայրկենին ինք զինքս ամենեին չէի մտածեր, և մինչև անխորհուրդ յանդութեան ձեռք զարկած էի, տեսնելով այն հնութեան առարկայից բազմութիւնը. որոց իւրաքանչիւրն պէտք էր ունենար, ինչպէս ալ ունի, պատմական ու գիտնական մեծ ու անգին աժէք :

Սակայն անկարելի եղաւ ինծի տեղափոխել այդ գանձն առանց ամուսնոյս ձեռնտութեանը, որ եռանդուն ճարպիկութեամբ կը ծածկէր զանոնք և կը տեղափոխէր այլուր ապահով տեղ մը »:

Եւ ահաւասիկ ասոնք են Պ. Շլիմանի դտած անգին առարկաներն .

Պղնձէ խոհակերոցի սկուտեղ մը, որուն տրամագիծն է 49 հարիւրորդամեղը, 4 հարիւրորդամեղը լայնութիւնն 25 արծաթ և 75 սոկի : Դարձեալ վեցտախտակ սոկւոյ խառնեալ ընդ արծաթոյ. և հաւանական կ'երևայ որ հոմերական տաղանդներն այս սոկեայ տախտակներն եղած ըլլան, որոնք պէտք էր որ յարգի բաներ եղած ըլլային. վասն զի Աքիլլէս իլիականին մէջ (իգ. 269) կ'առաջարկէ մենամարտութեան մը իբրև առաջին մրցանակ գերուհի մը, երկրորդ մրցանակ ձի մը, երրորդ մըրցանակ կատսայ մը, և չորրորդ մրցանակ երկու տաղանդ սոկւոյ :

Նոյնպէս պղնձէ ուրիշ սկուտեղ մը, որոյ թանձրութիւնն է 1 հարիւրորդամեղը, լայնութիւնն 40 և երկայնութիւնն 44. և ունի մէկ ծայրը երկու անշարժ անիւներ հանդերձ առանցիւք. և այս սկուտեղին վրայ կայ արծաթէ անօթ մը, 42 հարիւրորդամեղը բարձրութեամբ և նոյնչափ լայնութեամբ, հաստատուն կերպով սկուտեղին հետ

միացած : Կ'ենթադրուի որ այս անօթն դիպուածով միացած ըլլայ սկուտեղին հետ զօրութեամբ հրոյ, նշաւակ ըլլալով սկուտեղն առ այն՝ բոլոր Տրոյիոյ հրկիզութեան ժամանակ :

Գտաւ դարձեալ Պ. Շլիման ուրիշ պղնձածոյլ անօթ մ'ալ, որուն տրամագիծն է 11 հարիւրորդամեղը և բարձրութիւնն 14 հարիւրորդամեղը : Կլորածն շիշ մը 15 հարիւրորդամեղը բարձրութեամբ և 14 հարիւրորդամեղը տրամագծով. որուն կշիռն է 403 գրամ զուտ սոկի մանուածապատ անկատար զարդերով : Նոյնպէս ըմպանակ մը 'ի զուտ սոկւոյ նման առաջնոյն, որուն կշիռն է 226 գրամ: Դարձեալ ուրիշ ըմպանակ մը 'ի նոյն 'ի մեծագին մետաղէ 600 գրամ կշռով : Նաւածն է այս ըմպանակը, և ունի երկու կողմերը երկու մեծդաստակներ և երկու անցք ըմպելոյ, յորոց մին 7 և միւսն 3 հարիւրորդամեղը լայնութիւն ունին : Հաւանական է, կ'ըսէ Պ. Շլիման, որ այս ըմպանակը կոչնականաց կը ծառայէր. պզտի անցքէն կը խմէր կոչնատէրը և մեծ անցքէն կոչնականը :

Գանձը կը պարունակէր դարձեալ փոքրիկ բաժակ մը յոսկւոյ խառնեալ ընդ արծաթոյ, որոց համեմատութիւնն է 25 արծաթ և 75 սոկի : Դարձեալ վեցտախտակ սոկւոյ խառնեալ ընդ արծաթոյ. և հաւանական կ'երևայ որ հոմերական տաղանդներն այս սոկեայ տախտակներն եղած ըլլան, որոնք պէտք էր որ յարգի բաներ եղած ըլլային. վասն զի Աքիլլէս իլիականին մէջ (իգ. 269) կ'առաջարկէ մենամարտութեան մը իբրև առաջին մրցանակ գերուհի մը, երկրորդ մրցանակ ձի մը, երրորդ մըրցանակ կատսայ մը, և չորրորդ մրցանակ երկու տաղանդ սոկւոյ :

Կային դարձեալ երեք մեծամեծ արծաթի անօթներ, բաժակ մը արծաթի, թաս մը նոյնպէս արծաթի, իրեն վերաբերեալ զարմանագործ կափարչովն. և 43 նիզակածայր 'ի պղնձոյ :

« Շատ աճապարանօք ու երկիւղիւ ժողովեցինք այս վերոյնշանակեալ առ.

արկաներն, կը յաւելու Պ. Շլիման. և այս անտի յայտ է որ այն շփոթութեան մէջ չի կրցանք ընտրութիւն ընել գլխաւոր առարկայից. անանկ որ գտայ վերջէն գլխու երկու մեծագործ զարդեր յոսկւոյ, թագ մը և չորս գեղեցիկ ոսկեայ օղեր մեծարուեստ ճարտարութեամբ յօրինեալ: Բաց ասոնցմէ գտայ դարձեալ 56 գեղեցկաձև օղ, շատ մը պղտի մատանիներ ու կոճակներ »:

Այս ամեն բաներն մի առ մի թուելէն ետքը, կը սկսի Պ. Շլիման գեղեցիկ նկարագրութիւն մ'ընել վերոյիշեալ առարկայից. և մասնաւորապէս կը ճոխանայ թագին, ապարանջաններուն և օղերուն վրայ, ցուցընելով անոնց արուեստական յարգն և առաւել քան զամենայն անոնց պատմական անկշռելի աժէքն:

Վերջ տալու ատեն իր հետաքրքրական գրութեանը, կը յիշատակէ անդ Պ. Շլիման և իր մէկ գրուածքն որ կը տպագրի արդ՝ ի Լիբանա, Տրոյիոյ պեղմանց վրայ. որուն մէջ բաց ՚ի նոյն կողմանց աշխարհացոյց մէկ տախտակէն պիտի ըլլան դարձեալ 246 լուսանկար տախտակը, ներկայացնելով իր գտած գանձուն գլխաւոր առարկաները:

Պ. Շլիմանի գտած այս հնութեան ամեն առարկաներն Աթէնք փոխադրուեցան. և կը կարծուէր յառաջագոյն որ ասոնք Պրիամու գանձն ըլլան. բայց Պ. Ռոսբուլոս, ուսուցիչ բանասիրական ուսմանց և հնախօսութեան, որ կատարեց իր ուսման ընթացքն կողդինկայի Համալսարանին մէջ և կը գըտնուի այժմ՝ ՚ի Հաննովէր, յայտնեց իր կարծիքն, որ Պ. Շլիմանի մօտերս գտած հնութիւններն և ոչ փոքր յարաբերութիւն մ'ունին հնոյն Պրիամոսի գանձուն հետ, թէպէտ մեծ յարգ ու կշիռ ունին և կը զերազանցեն քան զվերջին ժամանակներս եղած ամեն գիւտերն: Պրիամու գանձուն չի վերաբերելուն գլխաւոր պատճառն այն է որ այս հաւաքածուին զանազան մասերն յատկացնող զարդերն կը պակասին: Եւանդուր կը կարծէ Պ. Շլիման բուի մը

պատկերն տեսնել, ուրիշ բան չէ բայց եթէ երեք կէտ զօրս կը համարի նա կենդանւոյն երկու աշքերն ու կտուցն:

Ըստ կարծեաց Պ. Ռոսբուլեայ պէտք է որոշել տակաւին թուականն որուն կը վերաբերին այս ամեն առարկաներն. միայն ոսկւոյն աժէքն զրեթէ 400,000 ֆրանքի կը հասնի: Կը յաւելու Պ. Ռոսբուլոս որ Պ. Շլիման միտք ունի այս գանձն Աթենքի Համալսարանին շնորհել, թէ որ յունական պետութիւնն թոյլտայիրեն հետազօտութիւններ ընել հնոյն Միկենայ աւերակաց մէջ:

=====

Եւրոպական ցեղք. — Աշխարհիս մէջ բազմաթիւ և ամենէն աւելի տիրողն լատին ցեղն է, ըստ այսմ վիճակագրութեան.

Լատին ցեղ. — 36,000,000 Գաղղիացիք, 26,000,000 Իտալացիք, 2,200,000 Պելճիացիք, 800,000 Զուիցերացիք, 4,500,000 Բորդուգացիք, 8,000,000 Ռումենիացիք, 1,000,000 Քանատա — Գաղղիացիք, 11,000,000 Պրէզիլիացիք, 32,000,000 Սպանիա — Ամերիկացիք.

Բոլորին գումարն 439,000,000:

Ալատիան ցեղ. — 80,000,000 Ռուսը և 25,000,000 Ալատիք՝ ՚ի Բրուսիա, յԱւստրիա և ՚ի Թուրքիա.

Բոլորին գումարն 405,000,000:

Անգլիական կամ կելտա — գերմանական ցեղ: — 31,000,000 Անգլիացիք, Սկովտացիք ու Իռլանտացիք, 44,000,000 Հիւսիսային Ամերիկացիք, 2,500,000 Քանատա — Անգլիացիք, 5,000,000 Աւստրալիացիք, և 1,000,000 զանազան տեղ ցրուած նոյնացեղ ժողովուրդք.

Բոլորին գումարն 78,500,000:

Գերմանական կամ սբանտինական ցեղ. — 40,000,000 Գերմանացիք, 9,000,000 Աւստրիա — գերմանացիք, 6,000,000 Հոլանտացիք և Ֆիամմինկը, 1,800,000 Զուիցերա — գերմանացիք, 8,000,000 Արանտինաւք.

Բոլորին գումարն 64,800,000:

Նոր չըսբուղլու և ԶԻՒ. — Ներկայ տարւոյս Բեղերմանի Աշխարհագրական տեղեկութեանց առաջին թերթին մէջ ընթերցաք 1872 ամին յունիս և յուլիս ամսոց մէջ՝ ՚ի Զիլի պատահած նոր հրաբըլիսի մը համառուտ ստորագրութիւնը:

Այս հրաբուղիսը զոր կոչեցին Լոճէլ, տե-